

## ՎԱՐԴԻ ՔԵՇԻՇՅԱՆ

### ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԶՐՈՒՅՑ

Մասնագետների լայն շրջանին մինչև օրս անծանոթ, ուստի և քննական հայացքից ու գիտական շրջանառությունից դուրս մնացած 18-րդ դարի ոչ անհայտ հեղինակ՝ տաղերգու Հովհաննես Բերիացու «Վէպք Կարթագինեայ» երկի գոյության մասին հայտնում են միայն մատենագիտական ցանկերն ու Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակները՝ նշելով սոսկ հեղինակի անունը և խորագիրը: Նկատենք, որ հայ միջնադարյան արձակի, զրուց-պատմությունների, և առհասարակ ուշ միջնադարյան գրականության (արձակ կամ շափածո) պատմությամբ զբաղված բանասերներից և ոչ մեկը չի հիշատակում ինդրո առարկա երկը, թեպետ որոշ հեղինակներ իրենց ուսումնասիրություններում նշում են Հովհաննես Բերիացու անունը:

Դեռևս 2006 թ. մենք ծանոթացել էինք Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ Մատենադարան) թիվ 2768 (1818 թ.) «Ժողովածու»ում պահպանված Հովհաննես Բերիացու մեզ հետաքրքրող երկին: Այդ ձեռագրից քաղված բանասիրական որոշ տեղեկություններ հրապարակել ենք մեր աշխատանքներում, հուսալով հետագայում անդրադառնալ բնագրի ուսումնասիրությանն ու հրատարակությանը:

Հետագա որոնումները ի հայտ բերեցին Մատենադարանի ևս երեք՝ Վեպք պարունակող ձեռագիր՝ թիվ 3384 (18-րդ դ.), 8420 (1814, 1822 թթ.) և 10589 (1817 թ.):

Վեպի մեզ հասած բոլոր օրինակներն էլ սյուժետային ու կառուցվածքային հատկանիշներով գրեթե նույնական են, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ գոյություն է ունեցել մի ընդհանուր նախօրինակ, որից էլ օգտվել են հետագյի գրիշները: Միմիայն այն հանգամանքը, որ 18-րդ դարում Հալեպում գրված այս երկը, ձեռքից ձեռք անցնելով, տեղ է գտել 19-րդ դարասկզբին ստեղծված մի շարք ժողովածուներում, վկայում է նրա հանդեպ դրսելորված հետաքրքրության և լայն տարածման մասին:

Այժմ անդրադառնանք Վեպի կառուցվածքին և ժանրային առանձնահատկություններին: Երկը իր մեջ ընդգրկում է հայ միջնադարյան արձակի ամենաստարբեր՝ զրուցի, մանրավեպի, իրապատում հեքիաթի և այլ ժանրային առանձնահատկություններ, սակայն բովանդակային և կառուցվածքային հատկանիշներով ավելի մոտենում է զրուցի, մասնավորապես՝ խրատական զրուցի ժանրին: Թեպետ մի դեպքում հեղինակային պատկանելությունը, մյուս դեպքում «Վէպք» խորագիրը, կարող են տարակարծությունների տեղիք տալ,

սակայն կառուցվածքային և տիպաբանական սերտ աղերսները հայ միջնադարյան զրուց-պատմությունների հետ, ինչպես նաև բուն խորագիրը (վեպ՝ «Հին զրուց, պատմական ավանդություն»), բավարար հիմք են տալիս Բերիացու այս երկը դասելու ուշ միջնադարյան զրուցների շարքին, որոնք շարունակում էին մնալ աշխարհիկ ընթերցանության կարևորագույն գործեր: Վեպի կառուցվածքը ներառում է զրուցի ժամանակաշրջան բնորոշ բոլոր բաղկացուցիչ մասերը՝ բուն պատմվածք, խրատական եղրակացություն և շափածո հարասություն:

Այնուամենայնիվ խրատական զրուցից Վեպը տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Այստեղ միջնադարյան զրուցներին հատուկ վիպական շերտին միահյուսված են հեղինակի խորհրդածություններն ու գնահատումները՝ խրատական ուղղակի շեշտով: Պետք է ավելացնել նաև հարուստ բովանդակությունը, հորինվածքի նպատակասլացությունը, սյուժետային գիծը, գեպքերի ու իրադարձությունների փոխկապակցվածությունը:

Ի դեպ, Վեպի մեջ հայտնի բոլոր օրինակներում էլ առկա է «նախաբանք» վերտառությամբ միևնույն առաջարանը, որը բուն շարադրանքին ուղղակիորեն չի առնչվում և հետագա հավելում է: Դա գրչի ավելացրած ընծայականն է՝ հավանաբար ուղղված իր վարդապետ-ուսուցչին՝ «քաջ գիտնական Ստեփանոս սրբազն արքեպիսկոպոսին»: Ուշագրավ է, որ ընծայականի հեղինակ գրիչը շեշտել է մատուցվող երկի կարևորությունն՝ իբրև «զյագուրդ՝ ազգեաց բանն կանխագիր»:

Բուն Վեպը կամ զրուցը սկսվում է պատմողական ժանրի՝ զրուցի ոճով. «Զրուցեն հին աւուրք մատեանք, և հասու առնեն զմեզ երեկայցն պատմութիւնք, թէ ընդ աւուրս ժամանակաց հոլովեալ ամաց...»: Այս սկզբնատողով հաստատվում է, որ Վեպի հիմնական կորիզը կազմող զրուց-պատմությունը հայ ընթերցողին ծանոթ է եղել շատ ավելի վաղ ժամանակներից: Որոշ հիմքեր ունենք կարծելու, թէ Վեպի սյուժետային հենքում ընկած է հայ հին և միջնադարյան բանահյուսությունից եկող մի աշխարհիկ զրուց, որը մշակվելով ներհյուսվել է պատումին: Զի բացառվում, որ դա արևմտաեվրոպական, կամ, ավելի հավանական է, արաբական գրականության մեջ ձևավորված և տարածում գտած մի զրուցի գրական վերամշակումը կամ վերապատումն է, որը հայ մատենագրություն է մուտք գործել բանավոր ճանապարհով կամ թարգմանության միջոցով: Զրուցի նախօրինակի հետագա որոնումները թերևս ի հայտ կբերեն նրանում առկա թարգմանական որոշ շերտեր կամ նրա հետ առնչվող այլ երկեր: Համենայն դեպս, և՛ պատումի նյութը, և՛ այնտեղ շրջանառվող որոշ տեղանուններ ու պատվանուններ, հիմք են տալիս ենթագրելու, որ հեղինակը ծանոթ է եղել այդ նյութը պարունակող թարգմանված գրքերի և գեղարվեստական մշակման է ենթարկել դրանք, ուր իրար են միահյուսվել հին ու նոր վիպասանությունները:

Բուն պատումը, ինչպես հուշում է խորագիրը, աղերսվում է Կարթագեն քաղաքին և նրա անկման ու կործանման պատմությանը: Կարելի է ասել, որ գործ ունենք նյութի ստեղծագործական իրացման հետ, որի խորքում պահպանված են հին աշխարհի «մեծագոր» տերություններից մեկի՝ Կարթագենի կործանման իրական կամ երևակայական պատճառները: Պատմությունից հայտնի է, որ Հռոմը շարունակ պայքարի մեջ էր տնտեսական և ռազմական հզորությամբ իրեն մրցակից Կարթագենի դեմ: Մասնավորապես Միջերկրական ծովում իր գերիշխանությունը հաստատելու և առևտում մենաշնորհի հասնելու համար, հռոմեացիները մի շարք հարձակումներից հետո, ի վերջո (մ.թ.ա. 146 թ.) տիրացան քաղաքին, դաժան կոտորած սարքեցին ու հիմնովին ավերեցին այն, արդյունքում երեմնի հզոր ու բարգավաճ Կարթագենն ընդմիշտ հեռացավ պատմության թատերաբեմից:

Պատմական այս եղելության հետքերն են, ահա, նշմարվում Վեպի խորքային շերտերում: Սակայն, հեղինակը, կարծես շրջանցելով պատմական իրական դեպքերն ու եղելությունները, ձգտել է ի հայտ բերել քաղաքը հիմնովին կործանման մղող այլագո պատճառներ: Այդ նպատակով նա ճոխ և փարթամ գույներով գովերգում է իր ծաղկման ու հզորության գագաթնակետին հասած կարթագեն պետության հաջողության ու բարօրության գրավականները՝ «համբարձածից իշխանութիւնն, յառոյգ ճոխութիւնն ու հաստադրական բարեկարգութիւնը»: Սակայն բարգավաճ կյանքն ու հետզհետե աճող ցոփությունն ու շվայտությունը, շափականց հարստությունն ու ազատությունը քայլայման եղրին էին հասցրել երկիրը: Բերիացի հեղինակը խորությամբ ըմբռնել է, որ հզիացած կյանքի մոլարն ու դրանց ուղեկցող խրախճանքներն ու գինարբուքները իրենց հետ բերում էին բարքերի անկում, բարոյական արժեքների վերացում, որն էլ երկիրը կարող էր իսպառ կործանման առաջնորդել: Եվ այսպես, հեղինակի իսկ բնորոշմամբ՝ «Տիրեալ երջանիկ այս քաղաքի՝ ապերջան ախտ շուայտութեան և արբեցութեան, ...և գլխովին զքաղաքն յայն ախտ վարակեալ...»: Ըստ Բերիացու՝ մարդիկ նախընտրում էին ավելի զվարճանալ, քան աշխատել ու արարել, և ավելի դատարկաբանությամբ, խելահեղ զվարճաբանություններով ու գինարբուքներով էին տարված, քան երկրի բարօրությամբ մտահոգված, ինչի հետևանքով քաղաքը «եղծեալ» կերպարանք էր ստացել: Այս դառնաղետ ախտով էր վարակված երկիրը գլխովին՝ ամենաստորին խավերից մինչև երկրի գլուխ կանգնած թագավորն ու իշխանավորները, և հեղինակը ժողովրդական ասույթն հիշեցնելով եղրակացնում է «Ճուկն ի գլխոյն սկսանի նեխիլ», ու ավելացնում «քանզի այս ախտ որոց տիրանէ գիտէ ի բարեաց զրկել, ի գոյից մերկել, ի կորուս գրկել, ի շարիս հերկել...»: Այս «ախտացեալ ախտո»-ն էր տիրել քաղաքի վրա, երբ թշնամին հարձակվելով, անգամ դիմադրության շհանդիպեց «զգաստութենէ և զգոնութենէ» զուրկ

բնակիչների մոտ, այլ հեշտ ու համարձակ գրավեց և ավերեց քաղաքն ու «գիտապաստ յերկիր ճապաղ սփռեալ նիրհել զքուն թանձրութեան մեռելոյ»:

Հարկ է նաև կանգ առնել մի կարևոր հանգամանքի վրա, որը էական տեղ է զբաղեցնում երկի խրատաբանական համակարգում: Նրանում արտացոլված են հեղինակի ըմբռնումներն ու աշխարհայցքը առհասարակ երկրի, պետության և պետականության վերաբերյալ: Ըստ Բերիացու՝ երկրի գլուխ կանգնած թագավորը, ինչպես և նախարարները, իրավապահներն ու դատավորները, պետք է լինեն արդարադատ, զորեղ և աշալուրջ, որպեսզի թուզ չտան ամեն տեսակ անիրավություն ու անօրինություն երկրի մեջ, վերահասու լինեն ներքին կարգ ու կանոնին, նաև հոգատար իրենց ժողովրդի հանդեպ: Միաժամանակ, հասարակության բոլոր խավերին հորդորում է նվիրվել իրենց երկրի բարօրությանը, աշխատանքով արարել, օրենք ու կարգ հարգել, և մանավանդ՝ արթուն և գգոն լինել իրենց երկրի պաշտպանության գործում: Հեղինակն իր այս տեսությամբ ինչոր շափով մոտենում է իշխանություն և հասարակություն քաղաքագիտական հիմքերին և պետության կատարելաստիպին, որն ինչպես հայտնի է, 18-րդ դարի կեսերից սկսած Եվրոպայից տարածվող լուսավորական շարժման բաղկացուցիչներից էր:

Վեպն իր պատումային հենքով ու սյուժետային էական գծերով հիշեցնում է Վարդան Այգեկցու «Թագավորի տղան» («Գինի») առակը: Երկու երկերի պարզ համեմատությունը ի հայտ է բերում իմաստային նմանություններ և ընդհանրություններ, թեև դրանք ժամանակային առումով խիստ տարբեր են: Հետևաբար կամ Բերիացու համար Վեպի ստեղծման նախագաղափար նախօրինակ է հանդիսացել Այգեկցու առակը, կամ էլ Վեպի և Վարդանյան առակի հիմքում ընկած է մի ընդհանուր սկզբնաղբյուր, բանահյուսական կամ թարգմանական երկ, որը գրական մշակման ենթարկվելով շարունակել է գոյատևել մինչև 17-18-րդ դարերը: Այդ նմանությունները առավել ցայտուն են պատումային հենքում և գինուն առնչվող խրատական շերտերում: Մյուս կողմից, քննարկվող երկը Վարդանյան առակից ակնհայտորեն տարբերվում է ոչ միայն ժամանակին և ծավալային առումով, այլև լայն ընդգրկումով, հատկապես անհատականից ընդհանրականին անցումով: Եթե Այգեկցու Առակում թագավորի տղան է անզուսպ խրախճանքների ու գինաբության ենթական, ապա Վեպում բովանդակ կարթագենի ժողովուրդն է դառնում գելս կյանքի ու գինեմոլության գոճը: Այս ներքին աղերսներն ու արտահայտությունները՝ «յիմարեցոյց զեղխութիւն»ը, «արբեցութիւն» ու «զգաստակորոյս գինեսիրութիւն»ը, ընդգծված առնչություններ ու ծագումնաբանական կապ են բացահայտում Վարդանյան առակի հետ: Այստեղ տեղին է հատվածներ մեջբերել Այգեկցու առակից, որոնք ակնհայտ նմանություններ ունեն Բերիացու հեղինակած Վեպի հետ:

«Մի թագավոր մի որդի ուներ և հրաման արեց նայիպներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվի...: Եվ մի օր մի նայիպ պատվելու

Էր տարել թագավորի որդուն...: Թագավորի տղան խիստ գինով էր և հարբած դուրս եկավ, ընկավ աղբանոցը և մեռավ: Եվ թագավորը հրամայեց, թե իմ իշխանության ներքո ինչքան այգի կա՞ փակեր և կարասները կոտրատեր: Եվ այդպես արին: Եվ մի այրի կին մի որդի ուներ և այրի կինը պահեց յուր հնձանը և գինին և ամեն առավոտ և երեկո հացի վրա երկու թաս գինի էր տալիս որդուն: Եվ այրի կնոջ որդին մի գիշեր դուրս եկավ, սպանեց թագավորի առյուծին, և թագավորն առավոտյան հրամայեց, թե ով որ սպանել է իմ առյուծին, եթե զա և ինձ պատմի՝ նրան չեմ պատժի: Եվ եկան այրի կինը և նրա որդին: Թագավորը նրան հարցրեց, թե ինչպես սպանեցիր առյուծին: Եվ նա ասաց, թե գիշերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին և սպանեցի: Եվ մայրն ասաց, թե նրան գինով է սնուցել և պատմեց, թե ինչպես է գինով սնուցել: Եվ թագավորը հրաման արձակեց. թե այգի տնկեք և գինին այնպես խմեք, որ առյուծ սպանեք և ոչ թե աղբանոցում մեռնեք»<sup>1</sup>:

Այն, որ Բերիացին հնարավորություն է ունեցել մշակելու և նորովի մեկնելու Վարդան Այգեկցուց քաղած առակը, պատահականություն չէ, ինչպես որ պատական չէ, որ Հալեպում, Հավանաբար տեղի դպրատան մեջ կրթություն ստացած Հովհաննես Բերիացին ոչ միայն ծանոթ է եղել Վարդան Այգեկցու առակներին, այլև իր ձեռքի տակ ունեցել է միշնադարյան բանահյուսությունից եկող այլ երկեր, որոնք մշակել ու հարստացրել է իմաստային նոր շերտերով:

Մեր կարծիքով կարելի է այս երկուսը նույն շարքի մեջ զետեղել՝ իբրև մշակութային միևնույն միջավայրի արտադրանք: Այստեղ մենք գործ ունենք գրական ավանդութիւն շարունակականության հետ, երկու գործերն էլ ստեղծվել են նման միջավայրում, թեև ժամանակով իրարից հեռու, սակայն նույն հոգեւոր դաշտում:

Ավելացնենք, որ Վեպի և Վարդանյան առակի միջև ընդհանրությունները չեն սահմանափակվում սոսկ իմաստային և գաղափարական հենքով, այլ նաև կառուցվածքային գուգահեռներ են ցուցաբերում: Երկու հեղինակներն էլ օգտագործել են միևնույն հնարքը՝ շարի ու բարու և դրանց հարացուցիչների հակադրման միջոցով հասնելու հղացքի իմաստային ներքին թելադիր շերտին: Այս հնարքը, որը լայնորեն կիրառվում էր միշնադարյան արձակ գրականության մեջ, առավելապես խրատական առակի և զրուցի ժանրերում, միտված էր ավելի անմիջական և ազդու դարձնելու նյութը: Այս սկզբունքով են ստեղծված քննարկման ենթակա երկու երկերն էլ. երկուսում էլ կշեռքի նժարի վրա է դրվում գինին, մի դեպքում իբրև շարիքի, մյուս դեպքում՝ իբրև մտքին ու հոգուն ուրախություն, զվարթություն և արիություն պատճառող բարիքի աղբյուր: Խրատական մեղմ շղարշով հանդերձ, զուգադրվում են գինու երկու

<sup>1</sup> Վարդան Այգեկցի, Աղուեսագիրք, Եր., «Սովետական գրող», 1981, էջ 24:

տարբեր հատկանիշները. այն չար է, եթե շարաշահում ես, և բարի է, եթե շափավորության ճանապարհն ես ընտրում: Այսպիսով մի դեպքում քննադատվում է վեպում պատկերված քաղաքի վատաքարո նկարագիրը, ցոփության, շվայտության, գինեմոլության բերած ավերքը, իսկ մյուս դեպքում այրի կնոջ՝ ամեն օր շափավոր և սակավ գինի խմող որդու վարքագիր մեջ, դրվատում գինու պատճառած բարիքները, որտեղ գինով կորովացած ու առյուծներին հաղթած քաջասիրտ պատանին դառնում է քաջառողջ, զորավոր, առույգ և ապահով կանքի խորհրդանիշը, որ այնքան համահունչ է Վեպում տեղ գտած շափաբանքի «Սակաւ ըմպողաց մայր է շատ օգտից» տողին:

Այս դեպքում հեղինակը հանդէս է գալիս իբրև զգոնության, շափավորության, ժուկալության գաղափարախոս, այսինքն՝ շափավորիր, որ շնորտակվես, որ նույնքան հարազատ է վարդանյան առակի վերջին տողերին. «Գինին այնպէս խմէք, որ առիւծ սպանէք, և ոչ թէ աղբանցում մեռնէք»:

Վեպում առանձին գլուխ է կազմում վերջաբանը, որ երևան է հանում ամբողջ պատումի համառոտ ամփոփումը. «Բայց դու եկ տե՛ս ինձ, թէ զի՞նչ ի միում և զի՞նչ ի միւսում գործեաց գինին...»: Այս բաժնի մեջ հրաշալիորեն դրսերվում են հեղինակի ստեղծագործական հմտությունն ու անձնական փորձառությունը, որ թույլ է տալիս զրուցի խորհուրդը ընկալել իր ամբողջության մեջ:

Վեպի մեջ, ինչպես նշեցինք, առանձնանում է «Բանք շափաբանք» խորագիրը կրող բանաստեղծությունը, որը բնագրի բովանդակության թելադրանքով հորինված բացատրող և մեկնող շափածո խոսք է: Պարզ ժողովրդական ոճով գրված «շափաբանք»-ն աչքի է ընկնում բանաստեղծական հղացքի ինքնուրուցնության աստիճանով և ընդհանրացման շափով, և արձակ բնագրից անջատ՝ կարող է ընկալվել իբրև ինքնուրուց բանաստեղծական կտոր: Եվ իրոք՝ շափաբանքը նաև տպագրվել է իբրև ինքնուրուց գործ, մասնավորապես՝ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում լուս տեսած «Ազգասէր»-ի 1846 թ. էջերում հրատարակվել են ուտանագորի առաջին երկու տները՝ հարազատորեն պատճենված ձեռագիր օրինակից:

Հովհաննէս Բերիացու այս գողտրիկ բանաստեղծությունը շի վրիպել նաև բանասեր, խմբագիր և հրատարակիչ Թեոդիկի սուր հայացքից, որն իր «Որթն ու իր բերքը» ընդարձակ ուսումնասիրության մեջ<sup>2</sup> հրատարակել է «Գինին խրախատու մտաց և սրտից» սկզբնատողով քերթվածը: Սա նաև հաստատում է, որ Հովհաննէս Բերիացին որպես տաղասաց բավական համբաւ էր վայելում, և նրա տաղերը ընդօրինակվում էին տարբեր ժողովածուներում:

Զրուցի լեզուն աչքի է ընկնում գրաբարի ճոխ և շոայլ, որոշ առումով իրթնախոս ոճով: Ամենից ավելի հագեցած է եղրաբանական շերտը, ուր

<sup>2</sup> Տե՛ս Թեոդիկ, «Ամենուն Տարեցուցը», 1926, էջ 158:

լայնորեն կիրառված են երբեմն ածանցված, երբեմն համանիշ ու նույնանիշ եզրաբառեր, իրենց հարուստ հնչերանգներով, բարդություններով ու նորաբանություններով։ Քննությունը ցուց է տալիս, որ երկն իր վրա կրում է միջնադարյան լեզվամտածողության որոշակի ազդեցություններ, մասնավորաբար՝ «Գիրք պիտոյից»ի և Գրիգոր Մագիստրոսի լեզվից։ Ավելին, կան փաստեր, որոնք գալիս են հաստատելու, որ Վեպն ստեղծող հեղինակը մեծապես օգտվել է Մագիստրոսյան լեզվառական համակարգից։ Հատկապես հոմանիշ և բաղաձայնութով (ալիսերացիայով) կապված բառերի կուտակումները հիշեցնում են վերջինիս ոճը։ Ահա բնագրային մի քանի նմուշ՝ «գտանեցեալ գինին գովկելի գովկեացն գործակ գարշելի», «կարող կալուղք կենաց կեղեքելոց ի կոկորս», կամ՝ «պարտիլ պարպատիլ և պարտափիլ»։ Կան նաև նմանատիպ արտահայտությունների, բառեզրերի օգտագործման բացահայտ նմանություններ։ Մեջբերենք մի օրինակ։ Հովհաննես Բերիացու գործում կարդում ենք. «տեսեալ զանտիականն զիսակութիւն, և զնկնահասակ դրակին զգծծութիւն» (թերթ 109թ)։ Նույն արտահայտությունն է օգտագործված Գրիգոր Մագիստրոսի «Առ Անանիա Հայրն Տիրուայ» նամակում։ «մինչդեռ տակաւին յանտիական խակութեանն»<sup>3</sup>։ Իսկ ահա «Գիրք պիտոյից»-ի մեջ կարդում ենք. «սեխենի և մորենի, որ մարմնով նկնահասակ և գծուձ են»<sup>4</sup>։ Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնություններն ակնհայտ են, բայց դա արդեն այլ ուսումնասիրության նյութ է։

Այժմ անդրադառնանք Վեպի՝ մեզ համար ամենակարևոր՝ հեղինակի ինքնության խնդրին։ Մի է «Վեպ»-ի հեղինակը, և ո՞ր ժամանակաշրջանի ու ի՞նչ միջավայրի հետ է կապվում նրա գրական արտադրանքը։ Մենք համարյա ոչինչ շգիտենք նրա կյանքի մասին, ո՞վ էր նա, կիլիկեցի<sup>5</sup> էր, թէ՞ հայաշխարհի մի այլ անկյունից Հալեպ գաղթած մի ընտանիքի շառավիղը. այս հարցերը պատասխան չունեն, ինչպես որ հստակ պատասխաններ չունենք իր ապրած տարիների, ստացած կրթության, և այլ հարցերի շուրջ։ Այդ իսկ պատճառով, եթե ձեռագրերում տեղ գտած Բերիացու երկերի ժամանակը (որոնք բոլորն էլ հետագայի ընդօրինակություններ են) համարենք 1800-ականների սկիզբը, ապա Հովհաննէսը ապրած պիտի լինի ոչ ուշ քան 18-րդ դարի կեսերին։ Այս ենթադրության օգտին է խոսում, օրինակ, Հալեպում ավելի վաղ ընդօրինակված ժողովածուների մեջ Հովհաննես Բերիացու գործերի իսպառ բացակայությունը։ Միակ վկայությունը նրա մասին իր գործերն են՝ ցրված Մաշտոցյան Մատենադարանի, Վիեննայի Միսիթարյան վանքի, նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարաններում և Փարիզի Ազգ. գրադարանում պահպող ձեռագրերում։

<sup>3</sup> Տե՛ս «Մատենգիրք հայոց», ԺԱ. դար, հատ. ԺԶ, Գրիգոր Մագիստրոս, աշխատ. Գ. Մուրագյանի, էջ 301։

<sup>4</sup> Տե՛ս «Գիրք պիտոյից», աշխատ. Գ. Մուրագյանի, Եր., 1993, էջ 146.23։

հազիվ մեկ տասնյակի հասնող տաղեր, թղթեր, ինչպես նաև այստեղ ներկայացվող զրուցը: Իր մասին առայժմ միակ հիշատակության հանդիպում ենք մեր ուսումնասիրության առարկա՝ Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2768 գրչագրում. «Յօրինեալ Յօհաննու սարկաւագի Բերիացւոյ, առն Աստուածիմաստի և քաղցրաբանի...»: Այս բնորոշումները գալիս են հաստատելու, որ Հովհաննես Բերիացին հայտնի է եղել իր ժամանակին իրեն հմուտ քարոզիչ ու աստվածաբան: Զեռագրերից մեկում Բերիացին ինքն իրեն սարկավագ է կոչում. «Յօվհաննէս սարկաւագ Բերիացի»: Կարելի է ենթադրել, որ Հովհաննեսը հոգեոր կոչման է նվիրվել հասուն տարիքում: Ամեն դեպքում Հովհաննես Բերիացուց մեզ հասած երկերը իրենց վրա կրում են հասուն, խորագետ, ու ամենից կարեորը՝ գրական-ստեղծագործական ձիրք ունեցող անձի դրոշմը:

Անհրաժեշտաբար նկատենք, որ միջնադարյան Հալեպը (Հին անվամբ Բերիա, այստեղից էլ հեղինակի Բերիացի անվանումը) վայր էր գրի ու գրչության, գիտության ու դպրության, որի արմատները սերում էին Հայկական Կիլիկիայից: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Հալեպը դարձավ այն բացառիկ կենտրոններից, ուր վերապրեց ու իր վերամարմնավորումը կիլիկյան մշակութին ու արվեստը: Հովհաննէս Բերիացու ժամանակ, ինչպես և նախկինում, Հալեպում կային պայմաններ և համապատասխան միջավայր, գրականության զարգացման համար:

Ամփոփենք. Հովհաննէս Բերիացու մինչև այժմ միայն մատենագիտական ցանկերից ծանոթ «Վեպը Կարթագինեայ» երկն առաջին անգամ է գրվում գիտական շրջանառության մեջ: Չնայած իր փոքր ծավալին այն ունի գեղարվեստական ընդգծված արժանիքներ: Աչքի է ընկնում հետաքրքրական բովանդակությամբ, շարադրանքի խիտ և ընդգրկուն հատկանիշներով: Այս գործը ուսումնասիրողին հնարավորություն կընձեռի ծանոթանալու ժամանակի գրական ճաշակին, նախասիրություններին, բարոյական ըմբռնումներին, հոգեբանությանը, ինչպես և հետեւելու ժամանակի գեղարվեստական արձակի զարգացման ընթացքին: Իբրև այդպիսին այն կարող է դասվել ուշ միջնադարի նշանակալի երկերի շարքին:

Բնագիրը պատրաստելիս ուսումնասիրել ենք Մատենադարանի՝ Վեպը պարունակող բոլոր չորս գրչագրերը: Հրատարակության համար համադրել ենք երկու ձեռագիր՝ A - թիվ 8420 (թերթ 105ա-112ա) և խմբագրական որոշ տարբերություններ ներկայացնող՝ B - թիվ 2768 (թերթ 3ա-10բ): Մյուս օրինակները (թիվ 3384 և 10589) գրեթե նույնական են A-ի հետ:

### ՎԵՊ ԿԱՐԹԱԳԻՆԵԱՅ

#### Նախաբանի

Գիտեմ սիրելի է քեզ՝ քա՛զդ գիտնական՝ կանգնումն կարգացեալ, հազներ-գութեանցն հանդէս, վասն որոյ եւ զրոյցս ինչ կարգեալ զկնի կարեւոր համարիմ քեզ՝ և որոց ընդ քեզ՝ առնել վերծանելեացն զբօսան: Քանզի ո՛չ ակն ի տեսանել, և ոչ ունկն ի լսել ունել զագուրդ՝ ազգեաց բանն կանխագիր: Եւ թէպետ անոճ եւ տգեղ տեսակս ունել տեսանիցին բանիցս յերիւրք, բայց առ այն ի գութ գորովոյ զիշանել ժտեմ, յիշեալ՝ թէ այն ինչ յատուկ է դեռավարժից՝ բազմասխալն լինել:

Ուրեմն կարեկցաբար եւ ողջամիտ սիրով ընկալ զայս, իբր զբոնալիր ափալիցն և եթ չուր, նուիրեալ սիրտն<sup>6</sup> այն արքայի<sup>7</sup>:

#### ՎԵՊ<sup>8</sup>

Զրուցեն հին աւուրք մատեանք<sup>9</sup> և հասու առնեն զմեզ երեկայցն պատմութիւնք, թէ ընդ աւուրս ժամանակաց հոլովեալ ամաց, քաղաքն կարթագինէ որոյ արդ և ո՛չ աւերակաց<sup>10</sup> հետք հետազօտողաց երկին, յօրժամ էր ի մեծազօր տէրութեան, յամբարձածիգ<sup>11</sup> իշխանութեան, յառոյդ ճոխութեան և ի հաստադրական բարեկարգութեան: Տիրեալ երջանիկ այս քաղաքի՝ ապերջան ախտ շուայտութեան և արբեցութեան, յաւագաց հաւեալ և յանաւագս պսակեալ, վատթար իմն վթարմամբ զնոսա վրիպեաց, և զլիսովին զքաղաքն յայն ախտ վարակեալ՝ յոգի դատեաց շարս զօրութեան զեղխութեանն զեղծագործ:

Եւ այս այնքան ամենաճեցուն առաւելութեամբ գերապատկեալ որպէս զի<sup>12</sup> ի բանականութեանն սահմանէ ամենեցուն եղծանել զեղծանել և տարօրինակ տարազու տարագրել ի զգացատութեանն զգոնութենէ. համբուրեալք զպայման պարսաւոյ անպարկեշտ պարու պաճարեղենաց: Քանզի անդ էր տեսանել զթագաւորին պատիւ՝ զիրաւունս ո՛չ սիրեալ, զնախարարս՝ յիշխանու-

<sup>5</sup> Ե Խորագրից հետո պահպանվել է Երկի՝ հավանաբար հնագույն օրինակներից եկող վերտառությունը. «Յօրինեալ Յօհաննու սարկազի Բերիացոյ, առն Աստուծիմաստի և հաղցրաբանի, որ ծաղկեցաւ ի յուր և տասներրորդ դարու»: Հաջորդում են՝ «Եսկ այժմ օրինակեալ եղև՝ յեղծեալ ձեռագրէ, աշխատասիրութեամբ ուրումն հեմացելոյ՝ յիմաստիցն հաշակէ: Ի սր. Էջմիածին» տողերը:

<sup>6</sup> Ե առատասիրտն

<sup>7</sup> Ե «Ի 1818 Սեպտեմբեր 26: Գծեալ եղեւ Վէպս Կարթագինեայ. Ի վայելումն Ստեփաննոս Շնորհապսակ Մրբազան Արքապիսկոպոսին Ենօնեան Տփխիսեցոյ, որ ի Մայրազան սր. Էջմիածին»:

<sup>8</sup> Ա շիր, լրացումն ըստ Բ-ի

<sup>9</sup> Ե իինաւուց մատեանս փիւ իին աւուրք մատեանն

<sup>10</sup> աւերակացն

<sup>11</sup> Երկու ձեռագրում էլ սխալ է. պէսք է լինի՝ համբարձածիգ

<sup>12</sup> Ե մինչ զի փիւ որպէս զի

թեան հոգս ո՞չ հոլովեալ, զվերակացուս ի յապահովութեան քաղաքին ո՞չ յածեալ և զիրաւարարս ի դատ ընտրողութեան ի դատողականն<sup>13</sup> աթոռ ո՞չ հանդիսացեալ:

Եւ առ<sup>14</sup> ի հաւաստել հասարակաց առածին՝ թէ ձուկն ի գլխոյն սկսանի նեխիլ: Զնոյն վիշտ վտանգք կարեգին կրից և երաստ ամբոխին յանձին ունէր ստանձնեալ<sup>15</sup>, զի որեարն ո՞չ զիւրեանց զարհեստից զհետ լինէին կրթեալ: Կանանին՝ ո՞չ զտնարարութեան զկնի հետամուտ եղեալ: Մանկունք՝ ո՞չ ի հրահանգ անտիական<sup>16</sup> խակութեան առ մանկածուս առաքեալ, որպէս և ոչ իսկ սոցա երբէք ընդ փորձ ազատական արհեստի մխեալ: Եւ այսպէս տաքեռնիք արուեստականաց առ արկանեալ, կրպակք հանթից փակեալ, սենեակք վաճառաց աղիսեալ, առ և գինք անհետացեալ և տարագք աղիսամաղից շարամեծ զերծեալ<sup>17</sup>: Յորոց շահուցն յուսոյ՝ ուշակորոյս և տեարցն լեալ լքան՝ լուծան՝ ընդարմացան ժողովն համայն, զվերջինն արբեալք զթշուառութան մահամատոյցն զբաժակ: Քանզի այս ախտ որոց տիրանէ<sup>18</sup> զիտէ ի բարեաց զրկել, ի գոյից մերկել, ի կորուստ գրկել, ի չարիս հերկել, և զպատն բնակութեամբ անապատ ի բարեկարգութեանց կարգել:

Զնոյն ախտացեալ ի խոտան ախտէ յաղթեցեալս այս քաղաք, լինէին իրաւունքն մերժեալ, ծէսքն ջրեալ, բարեկարգութիւնքն խահրեալ. և չարակրութիւնք յամէնուստեքէ<sup>19</sup> պատեալ պաշարեալ, մինչեւ համակ թագաւորութիւնն զվեր ի վայր գրեթէ կրել զկործանումն: Քանզի անշուշտ բարձեալ բերէին յանձինս զտիպ պատկերի հեղեղահեղձն արանց<sup>20</sup>, և վայելէին զվայն յամովսածնէն կարդացեալ, որոց ընդ առաւօտս յարուցեալ զարբելեաց<sup>21</sup> լինին զհետ ի նմին երեկոյացեալք: Դա և դոքա գինեկէզք մոլեալ մոլորեալ զանառակ արբեցութեան զկնի, և առ մի մի վայր խրախճանս<sup>22</sup> յօրինեալ, զիներբուս հարեալ<sup>23</sup>, ցանկ զանձինս ի շուայտութեան տիզմ թաթաւեալ ո՞չ դադարէին, որով համբուրէին զվիճակ արժանաւոր արդարեւ տարակուսանաց և մշտարտօսր կականման: Քանզի յայն սահման դառնադառն վտանգի և ժանտաժուտ ժողիսութեան եղեն ժաման, մինչ զի՞ թէ դէպ լինիցէր<sup>24</sup> մօտալուտ թշնամեաց յառնել ի

<sup>13</sup> Բ ի դատողութեանն

<sup>14</sup> Բ Եւ առ չիք

<sup>15</sup> Լրացումն ըստ Բ-ի (անընթեռնելի)

<sup>16</sup> Բ + տիոց

<sup>17</sup> Բ արհամարեալ փի շարամեծ զերծեալ

<sup>18</sup> Բ տիրանայ

<sup>19</sup> Բ յամէն ուստի՛ կուսէ

<sup>20</sup> Բ հեղեղամեղծիցն փի հեղեղամեղծն արանց

<sup>21</sup> Բ զարբեացն

<sup>22</sup> Բ խրախնան

<sup>23</sup> Բ հաստեալ

<sup>24</sup> Բ լինէր

վար կամ հենից հրահոսակաց<sup>25</sup> գերփութեամբ յերկիր նոցայ յարձակել, վաղու ևս հեշտին իմն և համարձակ ձերբածիդ<sup>26</sup> յինքեանս գրաւեալ գերկիրն նոցայ և զաթոռ՝ անձետ և անյիշատակ զկեանս նոցայ չնչեալ բառնային ի կենդանեացս երկրէ:

Եւ այսպէս գերեաց գինին, յիմարեցոյց զեղսութիւնն, թմբրեցոյց<sup>27</sup> արբեցութիւնն մեղկացուցիչ, և ի դրունս կորստեան պատաժեցոյց գինէսիրութիւնն զգաստակորոյս և հանձարազրաւ:

Դէպ լինէր յաւուրսն յայնոսիկ զոմն յարքունի փառունակ իշխանաց՝ կարծեալ զգօն և յամենայնի խելամուտ, յուրեք առաքեալ մեծասար հանդերձանօք պիտևան գործոյ վասն<sup>28</sup>, և յուղորդութեան անդորր և ապահով պատահեալ վայրի՝ էջս առ նոյն հրամայէ առնել, յորում հետ մեծահաց զճաշն կազմելոյ յումպ արբելեաց զերախանն լուծանեն, ընդ բուսոյ բարուց բնութեան նոցին, մինչև յուշակորոյս և զգայազիրկ պարտիլ պարպատիլ և պարտավիլ նոցայ ի բազում գիներբութենէ անտի, և դիտապաստ յերկիր ճապաղ սփուեալ նիրհել զքուն թանձրութեան մեռելոյ զօրէն:

Յայն պահ պատահեալ անգեղ օդաթոիչ սլացմամբ, և համարելով զնոսա անկեալս ի պատերազմի, ճախր առեալ ուղղակի խոնարհեալ յարձակի ի վար և զերկուս սալարին զակունս յակնակապճէ անտի բրեալ բոլորեալ յուտեստ իւր յարդարէր, և անդրէն խոյացեալ, ուստի էջն դարձ առնէր ի հանդէս հատուցման, արդարեա արդար հանդիպեալ, զի զաշացուն յոգի անարժան դատեաց տեսակն գոլ ի մարմնի:

Այլ շու առ չուականին՝ յանակնունելի վտանգէս՝ ոչ ինչ զգացեալ, օգուտ ժամուց զկնի ի գինւոյ թմբութենէ լրջացեալ, աւաղականն ձայնարկութեամբ գանձինն տոյժ կոծէր, և վայրս վհատականս ժառանգեալ տարաբաղդութեանն կարդացեալ, ուստի չոգաւն ի նոյն դարձ առնէր, անդործ թողեալ զկարեորն գործ:

Իբրև յայն ողորմագին սահման թշուառութեան ի տես թագաւորն<sup>29</sup> զիշեալ զիւրն մտերիմ և զթագաւորութեանն խորհերիմ, միանգամայն և յարքայանիստ քաղաքին շարաշուր տգեղ անկարգութեան անդր հայեցեալ, յայն որ ի վերջինն էր վարեալ վարանումն, ուշ ի կուրծս անկեալ, յանդաճումն վարեալ, յարտասուս հարեալ, ի սիրտ և ի հոգի կարեվէր խոցեալ, ելս խորհէր իրացն գործել, և առ վշտին վարանեալ ժամ դնէր, կէտ սահմանէր, պահ պայմանէր, խմբել ազա-

<sup>25</sup> Բ հրոսակաց

<sup>26</sup> Բ ձերբակալ

<sup>27</sup> Բ թմբեցոյց

<sup>28</sup> Բ պիտևան գործոյ վասն մեծասոր հանդերձանօք փիւ մեծասար հանդերձանօք պիտևան գործոյ վասն

<sup>29</sup> Բ ի տես բազաւորն յայն ողորմագին սահման թշուառութեան փիւ յայն ողորմագին սահման թշուառութեան ի տես բազաւորն

տերամն երաստից ի կոչ արքունի, այն ինչ անձաշակ լեալք<sup>30</sup> զայն օր յարբելեաց<sup>31</sup> համոյ:

Նոքա այն ինչ ըստ տէրունի հրամանին ի ժամակալ յօրադէտ պայմանն փութային<sup>32</sup>, անդէն բանել սկսաւ արքայն և զծածուկս խորհրդոցն խորհրդապետացն հոլոնելոց հոլանել:

Արժան է մեզ ասէ, ո՞վ արքայութեանս կարեաց խոհեմ խորհրդածուք զխորհուրդ<sup>33</sup> մէջ առնուլ, որով մարթացուք զդաւարեր զանհնարին վտանգ աղէտիս յանձնէ ի բաց պարուրել, և ի թիւր թեակոխութենէ զմեզ ուղղել: Զի թագաւորութեանս այս մեր վեր՝ արժանաւոր խորհրդուք ներհուն վերասպիցդ վաղվաղ մինչ չկ զանձամբ կոռւեալ եթէ ո՛չ բուժիցի զայրանայ, փաղաղէ, և զթագաւորութեանս մարմին համաձարակ ախտալից ի կորուստ գրաէ: Յոր պահ վերաց խարանք անգործ պատահեսցին և սպեղանեաց դիրք ի շպէտս վատնեսցին: Հապա՝ մինչ ժամ կայ ձեռս ի գործ արկցուք և յանձանց շինութեան անձանձիր ճեպով ճեպեսցուք: Մի՛ և մ՛ առօրեայ հեշտութեան և ախորժակի մերոյ փոքրու վասն ծաղածանակ<sup>34</sup> ի յաւիտենից կեանս լիցուք, և զոգնագրո՞ խուժանին զօգուտ ի վերջ նահանջեսցուք, որով ո՛չ ինչ շահեցան՝ որք այնպէսն գնացին:

Իբրև զայս օրինակ զբանսն մերկանայր թագաւորն, ապա՝ ունկնդրացն բոյլք և յակճիռս կացելոցն կաճառք խելամուտ խօսիւքն ամոքեալք, իբրև ընդ մի բարբառ աղաղակել սկսան. կեցցէ՛ արքայ, ասեն, սրտի մտօք հաճ և հաւանեմբ հոյակապ հրամանիդ, թէկ ընդդէմ դիւրութեան մերոյ<sup>35</sup> ոգորեցի, միայն թէ մարթեցէ զմեզ յայս մօտակալուտ մահահրաւէր կործանմանէ ի կեանս կանգնել: Ապա՝ ի հասարակաց հաւանութենէն դատեալ ընտրեցաւ<sup>36</sup>, զի ի բագն արկցի պարուրեալ հրամանաւ ուման գինւոյ, յամենայն տէրութեան կարթագինեայ ի կորուստ մատնելով միանգամայն զայնու ժամանակաւ գտանեցեալ գինին գովելի՛ գովելեացն գործակ գարշելի: Վասն որոյ արքունի մեծազօր սաստիւքն հրաման հան<sup>37</sup> եղեւ թագաւորն ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրում, զի ի հպիլ այսմիկ հրամանիս ի մեծի և ի փոքրու լսելիս ի կորուստ դատեսցեն զգինի գտանեցեալ առ մի մի այր<sup>38</sup>:

<sup>30</sup> Ե լեալ

<sup>31</sup> Ե յարբեաց

<sup>32</sup> Ե փորքացան

<sup>33</sup> Ե զխորհուրդս

<sup>34</sup> Ե ծաւածանակ

<sup>35</sup> Ե մերում

<sup>36</sup> Ե ընտրեալ դատեցաւ հաւանութեանն փի հաւանութեանն դատեալ ընտրեցաւ

<sup>37</sup> Ե հրամանական փի հրաման հան

<sup>38</sup> Ե գտանեցեալ զինին առ մի մի այր դատեսցեն փի դատեսցեն զգինի գտանեցեալ առ մի մի այր

Եւ յետ պայմանեալ աւուրն լրման, առ որում և գտանիցի նոյն նիւթ ընդ զնդալոյ ի կորնչելն՝ ինչքն յարքունիս և ինքն ի ծովու ալիս<sup>39</sup>:

Եւ այս բագ արգելանաց այնքան յոխորտ և հատու, մինչ զի թէկ թագագարմի կամ արքայ<sup>40</sup> որդւոյ իսկ անցանել զանցանել իցէր ընդ այս հրամանն, նոյն բաժին շարաշար կտտանաց հանդերձեալ պահեար որ ինչ յետին ստանկին<sup>41</sup>: Զայս օրինակ և քարոզն ի հրապարակ քաղաքին կարթագինեայ կարդայր, և զօրեղ զօրականք պատկառատեսակ պալատին յայս հատու հրամանէ իբրեւ զնետու մինեալ կաղնոյ կայծակամբք յեղակարծ յիւրաքանչիւր տունս յարձակեալք, զամանսն բեկեալ՝ զամանեալսն հեղուին: Յորմէ շէկորակ զուրցն հեղեղք երևէին տիրել, և կոտորոցն բեկորիւքն մարթ երևելակառ<sup>42</sup> կառուցանել:

Թէպ լինէր կնոջ միոյ այրոյ՝ ունողի զմանուկ մի երկեմեան ծմակացեալ ծերութեան լուսածագ, ունել զերկու կարասս գինոյ, յորոց մինն անխայեալ, իշուցանէ զայն ի ստորին նկուղ գետնափորի անդ, և ընդ երկրաւ զետեղեալ հետախաղաղ զշափղն ծածկէր, յապայն ժամանակի առ սակաւ սակաւ ի սնունդ զարգացման մանկանն տղայի:

Իբրև եկին մտին ի տուն անդր դահիճքն հրամանակատարք, տեսեալ զմի կարասն հարեալ բեկին, իսկ զմիւսմէն տգէտացեալք արձակեցան ի բաց:

Եւ այսպէս յամենուրէք նովին հանգամանօք կատարեալ զհրամանն ահեղ իմն բանի ի սակս աւուրս զբանն բոլորեցին, և զգործն ի գլուխ անվեհեր մատուցին:

Եւ առ ի հաստարմատ հիմնել զայս պարոյր հրամանի, առ երեկոյ՝ իբրև արևն ի մուտս մօտէր՝ զերկուս ահեղ առիւծունս ի գառագղէ անդի ի քաղաքին փողոցս արձակէին: Յորոց երկիւղէ չէր մարթ ումեք գիշերայն ընդ դուռն տան իւրոյ ելանել, ոչ ի պէտս ինչ, և ոչ յերթեեկս<sup>43</sup> բարեկամութեան, որով կասեցան օրէնք խրախճանաց, և լքան կազմութիւնք մեծահաց կոչունց, զի բարձեալ պատճառին, բարձաւ և պատճառելին:

Եւ այսպէս խորհրդով և գեղեցիկ մոլութեամբ յերկրէ անտի ախտն զինեճանութեան կարճնովին ջնջեալ, հիմնեցաւ հաստատեցաւ ընդ նորա զգաստութեանն զգօնութիւն, և որք անտի յառաջագային բարեբաստ բեղմնաւորութիւնք, արգասալիրք ետուն զպտուղս իւրեանց:

Յայնմ հետէ սկիզբն կալաւ<sup>44</sup> արքայութիւնն կորովանալ, իշխանութիւնն ձոխանալ, և ձգել ուր չէր կարգացեալ անուն կարթագինեայց, վաճառք առա-

<sup>39</sup> Ե ի ծովու ալիս, և ինչն յարենանիս փիս յարենանիս և ինչն ի ծովու ալիս

<sup>40</sup> Ե չիք

<sup>41</sup> Ե ստան (երկու ձեռագրերում էլ սխալ է. պէտք է լինի՝ սատակ)

<sup>42</sup> Ե լ բուրգն ինչ փիս երևելակառ

<sup>43</sup> Լրացումն ըստ B-ի (անընթեռնելի)

<sup>44</sup> Ե սկսաւ փիս սկիզբն կալաւ

տանալ, արուեստ բազմանալ, առաքինութիւնն յօրանալ և անձն իւր այլ ի գործս ձեռաց իւրոց ուրախանալ:

Իսկ կնոշն այրոյ զարգացուցեալ զմանուկն, միշտ մատուակէր նմա ի գինւոյ անտի, մինչեւ ողջունել նմա ի պատանեկութեանն տես: Յաւուր միում անագանեալ և ի գործոյ ապաժամ եկեալ՝ մինչ մօտ էին զառիւծունսն արձակել, ոչ ժամանէ բերել յաղբերէ անտի ջուր, վասն որոյ զծարաւ ջրոյն զիշուցանել կամեցեալ, տակառաւ ի գինւոյն գովելոյ մատուցանէ նմա մայրն յըմանէ: Իսկ զկնի ժամուց ինչ իբրեւ զհասարակաւ գիշերաւ արծարծեալ ի նմա տապ տոշորման ծարաւոյ, և ո՛չ բաւացեալ յաղթել զջրոյն պապակ, և զզովացմանն փափաք, զմա՞ յաշն թիւրախէ և քաջարտեալ գոտէպնդեալ բառնայ զսափորն պղնձի ի յուս և զդուռն բացեալ զտան յաղբիւրն դիմէ, և իբրև լցեալ զայն դառնայր անդրէն՝ վատ իմն պատա՞ բաղդի լինէր նմա դիպան զիշերապա՞ առիւծուն ունել զճանապարհին անցս, որ և ահեղ կոչմամբ, ահարկու գոշմամբ և սասանական մոնշմամբ դէմ ընդ դէմ եկեալ և յարձակեալ ի վերայ կամէր կենդանւոյն կլանել զնա: Իսկ համբակին տեսեալ զաղէտ վտանգի կանխեալ՝<sup>45</sup> օրհասի մահուն եկեալ հասեալ և անդէն մօտակալուտ զոտիւքն պատեալ, ի բաց զերկիւղ սնոտի եղեալ, արտանայր արտեղանայր: Քանզի և չէր որ զօրավիզն առ որ կարդայր օգնել, կամ ի թիկունս հասանել, վասն որոյ առ հարկի ձեռն ի գործ առնէր, ինքնին մղեր առաքինանալ ի հանդէս մարտակցութեան ընդ ամե՞հի այն առիւծուն հակազինեալ<sup>46</sup>:

Անդ էր տեսանել զայլ իմն հանդէս դանեան մանուէածնի, որ խրոխտ զօրութեամբ՝ յերկուս զկերչին ցելոյր ժանիս, նաև փոքր առ սա զնորուն իմանամբ հանդէս:

Արդ՝ յետ օգուտ գոտէմարտութեան յետուստ կուսէ առիւծուն անցեալ և զերկուց ոտիցն կալեալ, յերկուս զանհեթեթն զայն մարմին բաժանէր և զնորինն գեշ ի փողոցի անդ ճապաղ սփոեալ ինքն անցեալ զնայր:

Իբրև այգն զցայգն մերկանայր, և այն ինչ ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, եկեալ առիւծապա՞հն ի պա՞ ունել զառիւծունսն, տեսին՝ զի մինչն չէր ի միջի և այսր անդր ընթացեալք անկեալ ականեցին ի մի հրապարակացն զշաւիզն մեռելուտի: Ուստի զարհուրեալ և ընդ գործն սքանչանի ահիւ պակուցեալ, նոյն հետ այն ազդ առնեն քաշի արանցն զայսպիսահաս իրակեալ վտանգս, որ ընդ լսելն տապ տագնապոյ տարակուսանաց զնովաւ շաղապատեալ, և ի կարծիս կասկածանաց ընդ աւագանւոյն թաւալեալ հասանէ նոցա հետ ընդ հասանել<sup>47</sup> յայն վայր, ի զննին տեսլեան<sup>48</sup> հրա-

<sup>45</sup> Ե զաղէտալի վտանգին կանխալ փիս զաղէտ վտանգի կանխեալ

<sup>46</sup> Ե Քանզի և չէր ո՛վ ... ընդ ամենի այն առիւծուն հակազինեալ չիք

<sup>47</sup> Ե + խմբովին

<sup>48</sup> Ե ի տեսլեան զննին փիս ի զննին տեսլեան

շազան տեսարանին, ուր զահէ զերկիւղէ հարեալ, և յերկար ժամս յապուշ կրթեցեալ, բանս ի բերան առեալ հիացականս ասել սկսան<sup>49</sup>. Հզօրիս վերայ ո՞վ զօրացեալ, և զանպարտելիս ո՞յր ձեռքէն պարտեալ, զահեղ թագաւորս ո՞վ ստրուկ կարգեալ, և զանարգ վախճան առ սովաւ ածեալ, որ զայս հրաշաւէտ յաղթութեան ուղղեալ դիացազգի զնա ի դէպէ կարդալ:

Ապա ճշտիւ խնդրել սկսան, ո՞վ ասեն բանեղէն առիւծուս իցէ պատահեալ, եկեսցէ կացցէ ի մէջ, զի զնա մեծաշուրջ մեծապարգև պատկացուք, պանծ մեզ վարկուցեալ, զառ ի նմանէ յաղթութիւնն ուղղեալ:

Յայս ձայնէ վստահանաց խրախուսեալ հումկու պատանիս այն<sup>50</sup> աննման, քաջի արանցն փոխարինին լինէր յանդիման: Յիս ասէ՝ տէր եպարքոս՝ այս վնաս, յայս նիշ գիշերի ծառայդ ծարաւեալ, և առ ի չգոյէ ջրոյ ի տան՝ յաղբիւրն շոքայ, յոր պահ պատահ պատուհասի լինէր ինձ ժաման, հեռ գայօղ առիւծուց միոյն ունել զանցս ճանապարհի իմոյ<sup>51</sup>:

Իբրև ստուգեցի զլինիլս կուր կորստական կոկորդից նորին, մենամարտեալ հատուցի զհատուցումն նորա նմին, և ևս շողշոպեալ<sup>52</sup> ի նորուն ժանեաց ողջունեցի զողջութիւն:

Իբրև այս բար զբանսն պատշաճէր, ակնապուշ ակնակառոյց որք յայն հանդէսի էին աչք ի նա հայէին, և տեսեալ զանտիականն զխակութիւն, և զնկնահասակ դրակին զգծութիւն, ընշացս բանալ սկսան անաւատ թուեալ նոցայ և ճառատական ճառքն ճառեցեալ: Վասն որոյ և զասացելոցն զփորձն առնուլ կամեցեալ բանս եպարքոսն մատուցանէ ի մէջ:

Եթէ չէ քո ասէ երբէք ընդ խարս ինչ եկեալ և կամ զսուտս սիրեալ, այժմ իսկ յանդիման ցուցանի. Է աստ գիշատելոյ առիւծուդ յարակից զուգորդ ի մէջ բերցի, եթէ վիճակէս զնա միւսոյն վիճակեալ բաղդի՝ յաւատ խաղաղիմք, եթէ ի դերևս լիցի քեզ ելանել, ոռու ընդ նորա մահու գրաւեալ քերփիս ի կենցաղոյս:

Բարւոք բարբառիք<sup>53</sup> ասէ համբակն՝ ո՞վ կարօղ կալուղք կենաց կեղեքելոց ի կոկորդս ձեր, բայց դուք ինձ նախ հրաման<sup>54</sup> երթալ զինու վառել և ապա յայս հանդէս մրցանակի շահատակել, որում պատասխանեալ եպարքոսին ասէ, Է ստակարկատ կեղծաբան զի թանգուզես, յառիւծն պատառեալ չէր ոչ որոյ վէրք, ոչ ատրճանակիւ հարանք, և ոչ այլ զինուց վիրաւորմանց ինչ տեղի, և զմէ՛ բաղայս բաղբաղես զինուորիլ զինու:

Ասէ մանուկն և չէ ինչ արդ պիտոյ զբազում բանիւք գալ, և ի ճշմարտութեան խօսելեաց վրիպեալ գտանիլ, ասացից զանսուտն տէր փոխարքայ,

<sup>49</sup> Բ սկսան ասել փիս ասել սկսան

<sup>50</sup> Բ այս

<sup>51</sup> Բ իմում

<sup>52</sup> Բ նողոպրեալ

<sup>53</sup> Բ բարբառիս

<sup>54</sup> Բ + նախ

զի եթէ ոչ նախ զարդու զինուք յօրինեցաց չէ ինձ մարթ ի ձեր<sup>55</sup> համարձակիլ հրաման:

Յայնժամ որպէս և կամերն յատենէ անտի ի տուն արձակեալ կացին, որք ընդ նմայն զօրականք առ դուրս, և ինքն մտեալ ի ներքս անդր, խնդրեաց խառնելեօք ի մօրէն ի գինւոյ անտի, զոր ըմպեալ և ելեալ արտաքս գնաց ընդ նոցայ և հասեալ յաշխարհաժողովն գուռնն խրախուսիւ խիզախէր:

Ածէք ինձ ասէր զգագանն կատաղութեամբ զինեալ և ես անձամբ անձին ընկճեալ նուաճեալ<sup>56</sup> պարտեցից զնա:

Իբրև շօշափմամբ հասին ի վերայ զի ո՛չ բարձեալ տանէր զիւր և ի զինուց<sup>57</sup> ինչ ի սքանչանս ըմբռնեցան, բայց ելից իրացն ուշ եղեալ ակն ունէին: Եպա ի հրամանէ թագաւորին ածաւ մատուցաւ ի մէջ անարգելն առիւծ արձակ ունելով յամէն ուստեքէ զկապանացն արգելս և յարձակեալ ի վերայ կամէր գազանային ժանեօքն լավլեզ մաքրել զմանուկն: Տի նա և սա ընդ առաջինն այն նուագի, զօտէպինդ քաջասրտեալ, նաև զայս զմիւսոյն<sup>58</sup> լծորդ ըմբշամարտութեամբ յաղթեաց և կամէր սմա որպէս և նմա զնոյն մրրախառն բաժակ մահու տալ ըմպել, եթէ չիցէր<sup>59</sup> արգելեալ ի եպարքուսէն յայս ձայն թէ թոյլ տուր առիւծդ արի՝ առիւծուդ անարի, զի աւանիկ քոյ գեր օրինակ քաջութեանդ առաք զշափ, բայց դու ե՛կ անսա ասա ինձ թէ ո՞ր և որո՞վ անվան և անվկանդ զօրութեամբ զօրացար ի զօրեղ առիւծուս վերայ:

Ասէ պատանին այդորիկ մեկնել առ յինէն յանհնարիցն, ահա՛, թէկ յօշ յօշ զանդամոց իմոց յօդս հրամայիցես<sup>60</sup> առնել: Եպարքուն երկիւղիկս արկեալ համբակին ասէ, իսկ եթէ ո՛չ ասասցես, ապրեալդ յերկուց մահուց երրորդիւս անզերծ վտանգեսիս մահուամբ, և զառիւծուն հատուցեալդ շափ պատարուն եւ կատարումն ի քում գոգի գոգեա զեղուն:

Պատանին ասէ, և չէ ինչ այդ ապաքէն յապաք արդ այսօր ի քոյ ձեռանէ զկենացս կատարած կայ ինձ համբռել, թէ յայտնեցից և թէ թագուցից: Բայց լա՛ւ լիցի ինձ ապաքէն, ծածկելով զխորհրդապահի անուն ժառանգել, քան փեռեկտելով ինձէն ինձ ի վիճ անհամար կորստեան խեղդիւք շրթանցս խարդաւանել:

Իբրև սոյն աւուրս կորովի խօսիւքն լինէր պետն պատասխանեալ, երդնում ասէ յարևն արքայի, զի չիցէ ինչ քեզ վտանգ իսկ<sup>61</sup> կենաց, հոլանելդ զսքանչելի ուժգնութեանդ զխորհուրդ:

<sup>55</sup> Ե ի ձեր չիք

<sup>56</sup> Ե չիք

<sup>57</sup> Ե զիւր և չիք (սխալմամբ՝ ի զինուց զինուց)

<sup>58</sup> Ե սոյն

<sup>59</sup> Ե չիք

<sup>60</sup> Ե հրամայես

<sup>61</sup> Ե իսկ չիք

Յայս ձայնէ բարբառոյ զօրացեալ զօրեղ զօրութեամբ զածածին յուշ ածել սկսաւ զարգել հրամանին, որ նախքան զվեշտասան ամի և զմօրն գաղտնելն զկարասն գինոյց, և նորին զնովաւ սնունդն և զառ ի նմանէ յաղթութիւն, և թէ այն իսկ էր իմս սպառազինութիւն, զոր ո՛չ յերևելիս ունել ումեք պիտոյք զոն, բայց եթէ ի ներքուստ անտուստ զնորայն բոցափայլ զօրութիւն ցոլացուցանել: Իբրև սոյն օրինակ բանք ի պատում պատանեկէն լինէին լսելի, ի հարուստ ժամս որք անդն էին՝ բազմականք և ոտնկայք կառեալ կապեալ և ի հիացումն կարգեալ, ո՛չ ունէին այլ ասել կամ<sup>62</sup> լսել ինչ եթէ ո՛չ զիրերաց զհետ հծծել յաղթանակ քաջալանջ մանկանս վասն որոյ և զնորուն դրուագ դրուատի համարձակածայն համայնից հնչեալ, բայց զի մի՛ յանբաւ յորդութեամբ անդր զեղծի բանս համառօտ հատանել հաւանիմ<sup>63</sup>: Ուստի թողեալ զբազումս խորախո՞հ մտաց իմաստասիրել անցեալ կացից ես անընդհատ պարապմամբ առ պսակ կատարման առաջադիր գործոյս:

Արդ՝ ի գործոյս<sup>64</sup> կէտ կատարածի վերընծայեցին զյաղթութեանս գործակ յաշտիճան աւագ, գիւղից և գերդաստանաց կարգեալ զնա տէր և ի թիւս ազատաց զնա գասեալ:

Եւ այսպէս բարեմոյն քաջողութեամբ և նսե՞ծ բարօրութեամբ կատարեալ զկեանս ընկալաւ զվախճան բարի ի բարուք ծերութեան, թողեալ ժառանգս և ընշաւէտ ժառանգութիւնս զկնի իւր ի յիշատակ յաւիտենական յապա ժամանակի արիական հոյակապ նահատակութեանն:

Հստ որոյ օրինակի և մեզ շնորհեացէ պարգեատուն ամենայնի գինեաւ արեան իւրոյ զարգանալ զօրանալ զինել և ի հանդէս ճակատու աներեան ոսոփիին մերոյ և յաղթող գտանիլ, որ իբրև զառիւծ գոշէ ընդ պարագլիսոյն առաքելոց վկայելոյ, շրջի և խնդրէ թէ զոր կլանիցէ:

Քանզի և մեզ մարդ առաջի կայ, բայց ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ խաւարային օդական այսոց փաղանգս, յորոց լիցի մեզ զերծանել շնորհօք ամենափրկչին Յիսուսի և զօրութեամբ արեան նորա խորտակել զզօրութիւն նոցա և զհնարս, Ամէն:

#### Վերջաբանք

Բայց դու եկ տե՛ս ինձ, թէ զի՞նչ ի միում և զի՞նչ ի միւսում գործեաց զի՞նին, զի յառաջինն յայն նուագ յայնքան անարգ նուաստութիւն զիջոյց զըմպուս իւր, մինչև զլինիլ բաւական քաջագիր նօտարաց կարգել յանբաւ տարածութեան ընդարձակատար քարտէնի<sup>65</sup> զնոցուն պարսաւս, թէկ յերկարս տարժանէին: Իսկ յերկրորդումն յայս անգամ, յայնքան ծալրաւոր երջանկութիւն

<sup>62</sup> Ե և

<sup>63</sup> Ե համարիմ

<sup>64</sup> Ե ի գործոյս չիք

<sup>65</sup> Լրացումն ըստ Ե-ի (անընթեռնեկի)

զգինեալն նովիմբ արար ժաման, մինչ գրեթէ յանարդ կայից ի բարձրագոյնն բարձրացոյց փառս հանդերձ կրկնանուագ փրկութեամբ ի մահուն դրանց:

Թողում որ ինչ յաւուրց անտի և այսր ի յուշոյ յիշատակաց, և յանվեհեր գրչացն կշռեալ, եպերանաց պարսաւ մոլելոցն ի նոյն, և բարեբան ներբող համեստացելոցն նովին:

Ընդ որում և ինձ է հաս արտավարան հէքացելոյս և վերջացելոյս արդարէ<sup>66</sup> յիմաստնոցն դամարճակէ և յիմաստիցն վիճակէ սակաւուք զսովաւ աշխատասիրել<sup>67</sup>:

### Համառօտութիւն բանիս ճոխութեան

Նախքան զայս ճոխ ճառեցի զախտին շուայտութեան Կարթագինեայ տիրանել և զզառածանելն շարաշար զքաղաքն ողջոյն: Զաւաքումն հոյակապ իշխանի միոյ ի գործ ինչ պիտևան և յուզւոյ զգեղիսիլ գինեաւ և գնիրհել: Զառ վայրն անգեղ պատահեալ զերկուս զաշսն զինեալ<sup>68</sup> զաշացուին յոգի, և նորին յանիմայս լեալ ի թափիլ գինւոյն զանդրէն դարձն մեծաւ կոծիւ: Թագաւորին ի վարանս յայսպիսահասն ըմբռնել վտանգից և զինորհրդականացն խորհրդով սաստիկս իմն բագարկումն գինուոյս արձակելով զառիւծս երկուս առ երեկոյ ի քաղաքին փողոցս, յարգելս երթևեկութեան, յորում ժամանակի և կնոջ մի այրւոյ երկեմեան ունողի մանկան ի դէպ գայ գաղտնել զկարաս մի գինւոյ, որով և զարգացուցեալ զմանուկն մինչեւ զպատանեկութեանն ողջունել նմա զտես, որ և յաւուրց միումն ապաժամ ի գործոյ եկեալ շժամանէ բերել յաղբերէ անտի ջուր, իսկ զծարաւն ի ժամին գինեաւ զիշուցեալ, ապա ի տապ պապակեալ և յաղբերակն չոգեալ ի սափորն լնուլ, ի դարձին առիւծ նմա պատահի, զոր մենամարտեալ<sup>69</sup> ընկճեալ ցելոյր զժանիսն: Ի լրջանալ այերաց խնդիր այնմ եղեալ ի կամաց կանգնի մանուկն յոտեան, և ի շաւատալի բանիցն լինիլ ի փորձառութեան մինեալ հանդէս, զկենդանին ածին ի մէջ զառիւծ: Համբակին հրաման առեալ սպառազինիլ և երթեալ ի տուն հին գինեաւ զանխուլն զինեալ զառիւծում ի մրցմանն գտանի յաղթական, իսկ ի զորպէսն հարցանել լոէ զստուգութիւնն<sup>70</sup> և յապահովն ի եպարքուէն լինելն ճառէ ի զառմու<sup>71</sup> զամենայն: Յորմէ հասանէ նմա յաւագաց վերստնել դաս, և բարեկրութեանց տիրանել մեծաց:

<sup>66</sup> Բ չիք

<sup>67</sup> Բ իմաստասիրեալ աշխատասիրել փիւ աշխատասիրել

<sup>68</sup> Բ բրեալ զինեալ փիւ զինեալ

<sup>69</sup> Բ մենամարտիկ

<sup>70</sup> Բ չիք

<sup>71</sup> Բ ի զառմու չիք

Ի նոյն կարգ բանք չափականք<sup>72</sup>  
 Գինին բախատու՝ մտաց և սրտից,  
 Սակաւ ըմպողաց՝ մայր է շատ օգտից,  
 Յաճախելն ի նոյն գունակ շուայտից,  
 յոգի ւ'ի մարմին գործէ փոնալից<sup>73</sup>։  
 Տե՛ս դու զբազումս՝ որք յայս մոլեցան,  
 ի բարձր կայից՝ որպէս հոսեցան,  
 Բայց որք սակաւու՝ սորին շատացան,  
 մեծաց գովեստից՝ յար արժանացան։  
 Մի քաջ խորհրդով շատ գործք վճարին,  
 ոյր զի բաւական՝ աշխարհ վճարին,  
 Բայց շատն գինւոյ՝ տոյժ է հանճարին,  
 զբանեանն առնէ հանգէտ<sup>74</sup> պաճարին։  
 Ի սփոփ տիրանաց է առ պիտեան,  
 պիտանեաւ լինին բազումք անպիտան,  
 Վշտացն փարատ՝ ոմանց է սատան,  
 որք ի նոյն յարակ դանդաղեալ մնան։  
 Բոնասբոսեսցուք ի գինւոյն պատճառ,  
 զանձս վաղեմնիս՝ կարգել ի յայս ճառ,  
 Ուստի սա լիցի յարացոյց պայծառ,  
 և մեք գործեսցուք այս վէպի վճար։

### Varty Keshishian A Newly Revealed Tale of the 18<sup>th</sup> Century

The “Tales of Carthage” by Hovhannes of Beraia, a famous ballad maker of Late Middle Ages, is still unknown for wide circle of specialists and naturally has dropped out of scientific circulation. Only the bibliographic lists and catalogues of manuscripts of the Matenadaran provide information about the existence of this work.

In four manuscripts preserved in the Matenadaran (M2768, M3384, M8420, M10589) similar examples of the “Tale” exist. According to these copies it was possible to prepare the critical text of the “Tale”. All the extant copies of the “Tale” with their narrative and structural characteristics are almost identical and have only minor differences, which gives reason to suppose that there has been a general archetype.

<sup>72</sup> Լրացումն ըստ Բ-ի (Էջը վնասված է)

<sup>73</sup> Բ զանալից

<sup>74</sup> Բ զբանին առնէ հանգոյն փիւ զբանեանն առնէ հանգես

With its essential narrative features the Tale reminds the fable “The King’s Son” by Vardan Aygektsi”. It is not excluded that the Tale is based on Aygektsi’s fable or another common source. Both works were created in the same cultural environment. Although the period of time was different but the reality was the same. It confirms that Hovhannes of Beraia, who was born and received his education in Aleppo, was perfectly aware of Vardan Aygektsi’s fables and other tales and historical works from the medieval folklore, which he developed and introduced in a new way.